

ղէն: Ռզազուլի անուն տաճիկ մը Աթուին կը ծախէ Մելիքի գիւղին կալուածները, իսկ Բայրամ Պէկ մէկ դանկ կալուած կը ծախէ Բաթրինճ գիւղէն: Յակոբ Զուղայեցի կը վերստանայ նաև իր նախորդներուն իրաւունքը՝ Բոխենիս կամ Զաշուրլու գիւղին կալուածներուն վրայ (27):

1664ին Թիֆլիսի մէջ երեք խանութներ կը նուիրէ Յակոբ Զուղայեցիին, իսկ ճա Բենթութի որդին՝ Ասլան (28):

1671ին: կաթողիկոսը կը պաշտպանէ յաջողութեամբ իր Աթուին իրաւունքը Մուղնի և Քիրաշլու գիւղերուն վրայ, և կը գնէ Քեշիշքեանտի կալուածները(29):

Շահ Աբաս Բ.ին կողմէ ապահարկ ընել կու տայ նաև մէկ գութան ցանուած հող: Երբ Նաճաֆ իսան կ'ուզէ տուրք առնել Աթուէն, Յակոբ կաթողիկոս աղերսագիր կը ներկայացնէ նոյն Շահին, ըսելով. «Փիլիպպոս կաթողիկոսին մէկ գութանի ապահարկութիւն տուած ես, և այժմ քու պատուէրդ չեն պահեր»: Թագաւորը՝ հրամանագրով մը վերստին կը հաստատէ մէկ գութանի ապահարկութիւնը, և կը պատուիրէ Նաճաֆ իսանին որ տուրք չառնէ էջմիածնի վանքէն (1658), (30):

(27) Աճդ 124-127:

(28) Աճդ 207-208:

(29) Աճդ 116, 120, 128:

(30) Աճդ 132, 215: